*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ*
*ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶ*
*ՄՐԳԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ*
*հեռ. (0237)7.23.79*

*РЕСПУБЛИКА АРМЕНИИ*
*АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ*
*МУНИЦИПАЛИТЕТ МРГАШАТ*

**«19» Փետրվարի 2020 թ.** **N63**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Կից Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի 2020 թվականի փետրվարի 13-ի թիվ 4-Ն որոշումը՝ համայնքի ավագանու «2019 թվականի դեկտեմբերի 24-ի 2020 թվականի համայնքի բյուջեն հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
Առդիր՝42 թերթ:

*ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Գ.ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ Ա-03548-2020
19 02 2020 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

*«13» Փետրվարի 2020թ.* **N 4-Ն**

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ **2019** ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ **24-Ի** « 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԼ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ԹԻՎ 39-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին » ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով իրավական ակտերի փորձաքննության գործակալության եզրակացությունը.

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի «2020 թվականի Համայնքի բյուջեն հաստատելու մասին» N 39-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

Եկամտային մասում՝

*ա/Տարեսկզբի ազատ մնացորդի վարչական բյուջեի 27151.0հազ. դրամը hատկացնել ֆոնդային բյուջեին: Ընդամենը ֆոնդային բյուջեն կկազմի 42166.0 հազ.դրամ:*

*բ/Պետական բյուջեից հատկացվող սուբվենցիայի 1257 տողի <<0>> թիվը կարդալ <<1867.0>>*

*2) Բյուջեի ծախսային մասում՝*

ա/ 04 բաժնի 05 խմբի 1դասի 5113 հոդվածի «0» թիվը փոխարինել «8670.0»հազ դրամ թվով,

բ/ 04 բաժնի 05 խմբի 1դասի 5134 հոդվածի «0» թիվը փոխարինել «680.0»հազ դրամ թվով,

գ/ 01 բաժնի 06 խմբի 1 դասի **5113** հոդվածի «0» թիվը փոխարինել **«7202.0»**հազ դրամ թվով,

դ/ 01 բաժնի 01 խմբի 1դասի 4241 հոդվածի «300.0»հազ դրամ թիվը փոխարինել «1000.0»հազ դրամ թվով,

ե/ 01 բաժնի 01 խմբի 1դասի 5132 հոդվածի «0» թիվը փոխարինել **«300.0»**հազ դրամ թվով,

զ/ 08 բաժնի 02 խմբի 3 դասի 4251 հոդվածի «0» թիվը փոխարինել **«1000.0»**հազ դրամ թվով,

է/ 09 բաժնի 01 խմբի 1 դասի 5113 հոդվածի «0» թիվը փոխարինել **«14000.0»**հազ դրամ թվով,

ը/ 09 բաժնի 01 խմբի 1 դասի 5114 հոդվածի «0» թիվը փոխարինել **«1000.0»**հազ դրամ թվով,

թ/ 09 բաժնի 05 խմբի 1 դասի 5113 հոդվածի «0» թիվը փոխարինել **«9734.0»**հազ դրամ թվով,

ժ/ 09 բաժնի 05 խմբի 1 դասի 5134 հոդվածի «0» թիվը փոխարինել **«580.0»**հազ դրամ թվով,

ի/ 09 բաժնի 05 խմբի 1 դասի 4637 հոդվածի «0» թիվը փոխարինել «1867.0»հազ դրամ թվով,

լ/ 11 բաժնի 01 խմբի 2 դասի 4891 հոդվածի «9281.0»հազ դրամ թիվը փոխարինել «7581.0»հազ դրա թվով,

*Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:*

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ*

*Կողմ- 8* *Դեմ-0* *Ձեռնպահ-0*

*Վ.Հակոբյան* ____________ /ստ./

*Ռ.Մովսիսյան* ____________ / ստ./

*Թ.Սողոմոնյան* ____________ / ստ./

*Ս. Սարգսյան* ____________ / ստ./

*Վ. Վարդանյան* ____________ /ստ/

*Հ.Գալստյան* ____________ /ստ/

*Ն. Կյուրեղյան* ____________ /ստ/

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

*2020 թվականի*
*Փետրվարի «13»*
*Մրգաշատ ի համայնքապետարան*

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի՝

1/ վերնի աջ անկյունում անհրաժեշտ է նշել «ՆԱԽԱԳԻԾ» բառը.

2/ 1-ին կետն անհրաժեշտ է խմբագրել և վերաշարադրել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները, մասնավորապես՝ անհրաժեշտ է նշել փոփոխվող իրավական ակտի լրիվ անվանումը, այն է հետևյալ հաջորդականությամբ ներառել այդ ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը /տառերով/, ամսաթիվը, ակտի վերնագիրը, ակտի հերթական համարը, բնույթը և տեսակը:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն**